Ներդրումային միջավայր

ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՄԱՆԱԼ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Investment Climate Advisory Services | World Bank Group

IFC International Finance Corporation World Bank Group

THE WORLD BANK

MIGA Multilateral Investment Guarantee Agency World Bank Group

Պետական եկամուտների կոմիտե

Էկոնոմիկայի նախարարություն

Համագործակցելով՝

BMF FEDERAL MINISTRY OF FINANCE

Development Cooperation Ministry of Foreign Affairs

Սույն տպագիր նյութը պատրաստվել է "Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումներ" ծրագրի, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և Պետական եկամուտների կոմիտեի կողմից: Ծրագիրն իրականացվում է Համաշխարհային բանկի խմբի Ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայությունների և Համաշխարհային բանկի խմբի անդամ IFC-ի կողմից: Ծրագիրը ֆինանսական աջակցություն է ստանում Ավստրիայի ֆինանսների նախարարության և Նիդերլանդների արտաքին գործերի նախարարության կողմից:

Շրջանառության հարկի հասկացությունը

“Շրջանառության հարկի մասին” ՀՀ օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2012թ. դեկտեմբերի 19-ին և ուժի մեջ է մտել 2013թ.-ի հունվարի 1-ից:

1. Շրջանառության հարկը օրենքով սահմանված կարգով, չափերով ու ժամկետներում առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից իրականացվող գործունեության համար պետական բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկին (ԱԱՀ) և (կամ) շահութահարկին փոխարինող հարկ է:

2. Առևտրային կազմակերպությունների համար շրջանառության հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին: Շրջանառության հարկի մեջ շահութահարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 40 տոկոս:

3. Անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար շրջանառության հարկը փոխարինում է ԱԱՀ-ին:

Շրջանառության հարկ վճարող անհատ ձեռնարկատերերը և նոտարները շրջանառության հարկից բացի վճարում են նաև եկամտային հարկ, որը հաշվարկում և վճարում են ամսական 5 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), որը նրանց համար համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն:
(Տես “Եկամտային հարկի մասին” ՀՀ օրենք 10-րդ հոդված 8-րդ մաս):

Շրջանառության հարկ վճարողները

ՀՀ ռեզիդենտ* համարվող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողները, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների), իրացման շրջանառությունը՝ առանց ԱԱՀ-ի, չի գերազանցել 58,35 մլն դրամը:

Իրացման շրջանառությունը ներառում է նաև հաստատագրված վճարներով և (կամ) արտոնագրային վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով իրացման շրջանառությունը:

* Սույն օրենքի իմաստով Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպություններ են համարվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները:

Օրինակ- “Հ” կազմակերպության 2012 թվականի իրացման շրջանառությունը (առանց ԱԱՀ) ըստ եկամտի տեսակների հետևյալն է.

	Եկամտի տեսակներ	մլն. դրամ
1.	Ծառայությունների մատուցում	35,0
2.	Ապրանքների մատակարարում	15,0
3.	Արտոնագրային վճարով հարկվող գործունեությունից (թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրում)	12,0
	Ընդամենը	62,0

Տեղեկատվությունից հետևում է, որ “Հ” կազմակերպությունը 2013 թ.-ին չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող, քանի որ նախորդ տարվա (2012թ.) իրացման շրջանառությունը, ներառյալ արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակների մասով, գերազանցել է 58,35 մլն դրամը:

Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել*

1. «Հաստատագրված վճարների մասին» և (կամ) «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքների համաձայն հաստատագրված վճար և (կամ) արտոնագրային վճար վճարող անձինք՝ գործունեության այդ տեսակների մասով:

Հարկ վճարողները համարվում են շրջանառության հարկ վճարող գործունեության բոլոր տեսակների մասով, բացառությամբ այն տեսակների, որոնք հարկվում են հաստատագրված վճարներով և (կամ) արտոնագրային վճարներով:

2. Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողները և (կամ) ներմուծողները:

3. Բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային ընկերությունները, գյուղատնտեսական արտադրանք արտադրողները, աուդիտորական ընկերությունները, հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունները:

4. Առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները՝ պայմանավորված ՀՀ ռեզիդենտ հանդիսացող այլ առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում 20 տոկոս և ավելի բաժնեմասնակցությամբ:

5. Երրորդ անձանցից (այդ թվում՝ պետական մարմիններից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա՝ ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու հիմքով վերադաս հարկային մարմնի սահմանած կարգով բացառապես վերադաս հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված անձինք, եթե նրանց ընդհանուր իրացման շրջանառությունը գերազանցում է 58,35 մլն դրամը:

* Այն հարկ վճարողները, ովքեր չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ, ամբողջությամբ թվարկված են “Շրջանառության հարկի մասին” ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում:

Շրջանառության հարկի գործողության դադարեցման դեպքերը*

1. Ընթացիկ տարում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառությունը գերազանցել է 58,35 մլն դրամը:

2. Ընթացիկ տարվա որևէ պահի ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանք է արտադրել կամ ներմուծել: Տվյալ դեպքում հարկ վճարողը դադարում է համարվել շրջանառության հարկ վճարող փաստը տեղի ունենալու պահից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը:

3. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գրավոր հայտարարություն է ներկայացրել իր հաշվառման վայրի հարկային մարմին ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ՝ հայտարարությունում նշված օրվանից (բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու** ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից):

Օրինակ - “X” կազմակերպությունը 2013թ.-ի մայիսի 25-ին գրավոր հայտարարություն է ներկայացնում հարկային մարմին ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ, որով իրեն ԱԱՀ վճարող է ճանաչում ապրիլի 20-ից :
Եթե հարկ վճարողը հայտարարությամբ իրեն ԱԱՀ վճարող ճանաչեր մարտի 1-ից, ապա նա ԱԱՀ վճարող կճանաչվեր ապրիլի մեկից, քանի որ երկրորդ եռամսյակի առաջին օրը ապրիլի մեկն է:

* Շրջանառության հարկի գործողության դադարեցման բոլոր դեպքերը թվարկված են «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում:

** Հաշվետու ժամանակաշրջան է համարվում եռամսյակը:

Շրջանառության հարկի դրույքաչափերը և հաշվարկումը

➡ Շրջանառության հարկ վճարողները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար շրջանառության հարկը հաշվարկում են հարկվող օբյեկտի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով՝

Եկամուտների տեսակը	Դրույքաչափ
Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտներ	3.5%
Արտադրական գործունեությունից եկամուտներ	3.5%
Վարձակալությունից եկամուտներ, տոկոսներ, ռոյալթիներ, ակտիվների (այդ թվում՝ անշարժ գույքի) օտարումից եկամուտներ	10%
Նոտարական գործունեությունից եկամուտներ	20%
Այլ գործունեության (եկամուտների) տեսակներից եկամուտներ	5%

➡ Շրջանառության հարկով հարկվող օբյեկտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության հարկ վճարողի կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը), ինչպես նաև ստացվող այլ եկամուտները:

➡ Շրջանառության հարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում եռամսյակը:

➡ Սույն օրենքի իմաստով այլ եկամուտները ճանաչվում են «Ծահութահարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Օրինակ- “X” կազմակերպությունը 2013թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից ստացել է 3000,0 հազ. դրամի հասույթ, վարձակալության վճարներից – 500,0 հազ. դրամ, պահեստային տարածքի օտարումից – 7000,0 հազար դրամ: 2013թ.-ի առաջին եռամսյակի համար շրջանառության հարկի գծով պարտավորությունը կկազմի 855,0 հազար դրամ.

	Եկամուտների տեսակը	Հասույթ (հազար դրամ)	Հարկի դրույքաչափ	Վճարվելիք հարկ (հազար դրամ)
1.	Ապրանքների մատակարարում	3000,0	3.5%	105,0
2.	Վարձակալության վճարներ	500,0	10%	50,0
3.	Պահեստային տարածքի օտարում	7000,0	10%	700,0
	Ընդամենը	10500,0		855,0

Շրջանառության հարկի հաշվարկների ներկայացման կարգը և ժամկետները

Շրջանառության հարկ վճարողները մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող առաջին ամսվա 20-ը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի սահմանած ձևով շրջանառության հարկի հաշվարկը:

Հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ եռամսյակային տեղեկությունները ներառվում են շրջանառության հարկի հաշվարկում:

Շրջանառության հարկի վճարման կարգն ու ժամկետները

Շրջանառության հարկ վճարողները շրջանառության հարկի գումարը պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող առաջին ամսվա 20-ը:

Շրջանառության հարկ վճարող առևտրային կազմակերպություններն այդ գործունեության մասով շահութահարկի կանխավճարներ և նվազագույն շահութահարկի վճարումներ չեն կատարում:

Շրջանառության հարկ վճարողների կողմից այլ հարկերի վճարումը

1. Շրջանառության հարկ վճարողների համար պահպանվում է օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ գույքահարկի, հողի հարկի վճարման, աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարտադիր այլ վճարների, բնօգտագործման վճարների և տուրքերի հաշվարկման և վճարման կարգը:

2. Շրջանառության հարկ վճարողները առանց հիմնավորող փաստաթղթերի ֆիզիկական անձանցից ձեռք բերումների գծով, չեն հաշվարկում և վճարում 11% եկամտային հարկ:



3. Շրջանառության հարկ վճարողները ապրանքների և ծառայությունների դիմաց մատակարարներին վճարած, ինչպես նաև ապրանքների ներմուծման ժամանակ մաքսային մարմիններում վճարած ԱԱՀ-ի գումարները միացնում են այդ ապրանքների և ծառայությունների ձեռք բերման արժեքին (ծախսերին):

4. Շրջանառության հարկ վճարողների համար, այդ թվում՝ որպես հարկային գործակալ*, պահպանվում է ոչ ռեզիդենտներին հայաստանյան աղբյուրներից վճարվող եկամուտներից հարկերի հաշվարկման, գանձման և վճարման կարգը:

* “ԱԱՀ-ի մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ՀՀ-ում, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված (չհաշվառված) օտարերկրյա անձի կողմից ՀՀ-ում ԱԱՀ-ով հարկվող գործարք իրականացվելու (ներառյալ՝ այդ անձի սեփականությունը հանդիսացող ապրանքներ ներմուծվելու) դեպքերում այդ գործարքների մասով պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող՝ շրջանառության հարկ վճարող անձիք, օտարերկրյա անձանց փոխարեն ԱԱՀ-ի հաշվարկելու և վճարելու պարտավորություն չեն կրում:

Շրջանառության հարկ վճարողների կողմից հաշվարկային փաստաթղթերի դուրսգրումը և առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքերի վարումը

1. Շրջանառության հարկ վճարողները առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր չեն վարում:

2. Շրջանառության հարկ վճարողներն իրենց կողմից առաքվող, տրամադրվող, վաճառվող ապրանքների և մատուցվող ծառայությունների գծով գնորդներին (ծառայություններից օգտվողներին) դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Շրջանառության հարկ վճարողներն իրենց կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում ԱԱՀ-ի դրույքաչափի և գումարի վերաբերյալ նշում չեն կատարում (հարկային հաշիվ դուրս չեն գրում):



Պատասխանատվությունը օրենքը խախտելու համար*

Շրջանառության հարկով հարկվող օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում գանձվում է դրա արդյունքում պակաս հաշվարկված շրջանառության հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի **100 տոկոսի** չափով:

* (Տես “Շրջանառության հարկի մասին” ՀՀ օրենք 14-րդ հոդված):

Այս գրքույկի էլեկտրոնային տարբերակը հասանելի է նաև www.taxservice.am կայքում:

Ծրջանառության հարկի, ինչպես նաև հարկային օրենսդրության և վարչարարության այլ հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք՝

- այցելել ՀՀ հարկային ծառայության www.taxservice.am վեբկայք, կամ
- զանգահարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Հեռախոսազանգերի սպասարկման կենտրոն՝ 060 544444 հեռախոսահամարով, կամ
- դիմել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման հետևյալ կենտրոններից մեկը.

- **Արաբկիրի ՀՏ հարկ վճարողների սպասարկման կենտրոն**
  Կոմիտասի 35, Երևան 0012
  հեռ.՝ 060 544090
  arabkir-kentron@taxservice.am
- **Էրեբունու ՀՏ հարկ վճարողների սպասարկման կենտրոն**
  Սասունցի Դավթի 87ա, Երևան 0008
  հեռ.՝ 060 549164
- **Կենտրոնի ՀՏ հարկ վճարողների սպասարկման կենտրոն**
  Դեղատան 3, Երևան 0010
  հեռ.՝ 060 544281
- **Մաշտոցի ՀՏ հարկ վճարողների սպասարկման կենտրոն**
  Ֆուչիկի 27, Երևան 0048
  հեռ.՝ 010 349653
  Անդրանիկի 37ա, Երևան 0034
  հեռ.՝ 010 739304
- **Նոր Նորքի ՀՏ հարկ վճարողների սպասարկման կենտրոն**
  Մոլդովական 41, Երևան 0062
  հեռ.՝ 060 549231
  Ահարոնյանի 12/3, Երևան 0069
  հեռ.՝ 060 544945
- **Շենգավիթի ՀՏ հարկ վճարողների սպասարկման կենտրոն**
  Մանթաշյանի 27ա, Երևան 0006
  հեռ.՝ 060 549325
- **Գյումրու ՏՀՏ հարկ վճարողների սպասարկման կենտրոն**
  Հովսեփյանի 1ա, Գյումրի
  հեռ.՝ 060 549660, 060 549669
- **Եղեգնաձորի ՏՀՏ հարկ վճարողների սպասարկման կենտրոն**
  Նարեկացու 8/3, Եղեգնաձոր 3601
  հեռ.՝ 060 549703
- **Սևանի ՏՀՏ հարկ վճարողների սպասարկման կենտրոն**
  Սայաթ-Նովայի 1/1, Սևան
  հեռ.՝ 060 549581
- **Վանաձորի ՏՀՏ հարկ վճարողների սպասարկման կենտրոն**
  Տիգրան Մեծի 35, Վանաձոր 2001
  հեռ.՝ 060 549954, 0322 24204
  vanadzor-kentron@taxservice.am

Investment Climate Advisory Services | World Bank Group

IFC International Finance Corporation World Bank Group

THE WORLD BANK

MIGA Multilateral Investment Guarantee Agency World Bank Group

Պետական եկամուտների կոմիտե

Էկոնոմիկայի նախարարություն

Համագործակցելով՝

BMF FEDERAL MINISTRY OF FINANCE

Development Cooperation Ministry of Foreign Affairs

2013